

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԳԱՍԱԻԱՆԳՈՒՄՆ ՄԵՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵ-
ՐՈՒՄ.

(Շ-բ-ա-ն-ի. Ա-բ-բ-բ-բ. Բ. Թ.)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՂՕԹԷ.
ՆԵՐ ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Նախընթաց նկատողութեանց մէջ կրօնագիտութեան դասաւանդման մասին մենք երկու անգամ մօտեցանք աղօթքների ուսուցման հարցին: Առաջին այն ժամանակ երբ վերջացրինք Աստուծոյ յատկութիւնների մասին արած զբոսացարանութիւնը: Հատ յարմար կը լինէր այդ ժամանակ խօսել մարդու դէպ Աստուածն ունեցած յարաբերութեան մասին աղօթքով: Բայց Աստուծոյ յատկութեանց մասին հասկացողութիւնը պարզելու նպատակաւ յառաջ բերած խօսակցութիւնը պէտք է բաւականին լիակատար լինէր: Եթէ նորան պէտք է քննել որպէս պատրաստութիւն աղօթքների ուսուցման: Երկրորդ անգամ շատ յարմար կը լինէր անցնել պահապան հրեշտակի աղօթքի ուսուցմանն: Երբ զբոսացարանութիւնը նորա մասին բաւականաչափ լիակատար է արտայայտած: Մենք այդ չարեցիներ ոչ այս և ոչ այն դէպքում որովհետեւ աղօթքների ուսուցման վերայ կրօնուսուցիչները միատեսակ չեն նայում: Հայկոսացիների զանազանութիւնը դուրս է գալիս խիստ նշանաւոր խորհրդածութիւններից: Հատ կրօնուսուցիչներ կրօնագիտութեան կուրսի հիմք ընդունելով աղօթքներն, մեծ աշխատանք են գործ գնում երկապոցը ստիպելու ոչ թէ միայն սովորելու աղօթքները, այլ և իւրացնելու նոցա թարգմանութիւնը ներկայ աշխարհաբար լեզուով: Աղօթքների այդպիսի ուսումն կարող է որոշեալ մտքով բաւարար արդաօք տալ: Եւ արդարեւ՝ աշակերտները լաւ գիտեն և, ենթադրենք, քննութեանը արագութեամբ են պատասխանում աղօթքը կարողանում են անհասկանալի մտքերը փոխել հասկանալի մտքերի: Լաւ դէպքում մինչև անգամ կարող են բացատրել ամբողջ աղօթքի կամ նորա մասի միտքը: Գէպի գործն ունեցած տիրապետող յարաբերութեամբ, երբ եւ հաւատոյ գործը գնահատվում է թուանշանով, կրօնուսուցիչը կարող է այն մտքի դալ, որ նա ինչ աշխատել է: Միայն աղօթքների ուսուցման համար է արել: Ուրիշ կրօնուսուցիչներ վախենում են աղօթքների այդպիսի ուսուցանելուց: Երբովհետեւ այդպիսի եղանակը բովանդակում է իւր մէջը շատ մեքենականութիւն կամ ձեւականութիւն: — Եթէ կրօնը ուսուցանուէր վերլուծմամբ (անալիզով) կամ տրամաբանօրէն այն ժամանակ, յայտնի բան է ամենազօրեղ տրամաբանները կեանքի մէջ ամենակրօնական մարդիկն կը լինէին: Եւ արդարեւ, դատողութեան և զգացման խորքերի մէջ լիակատար անհամաձայնութիւն կայ: Ծայրահեղ դատողութիւնը մինչև անգամ վնասում

է զգացման զօրութեանն: Վերջին կրօնուսոյցներն հայեաքով անկաքելի է խափուել մինչև անգամ՝ երեխայոց արագ պատասխաններով նոյն իսկ կրօնուսոյցի կամ քննողի առջ, նոցա չի բաւականացնում մինչև անգամ իրենց պաշտօնակիցներն շատ կամ՝ քիչ յոյսը՝ թէ ստացած գիտութիւնը վերջումն անպատճառ կը բռնէ հոգւոյ բոլոր զօրութիւնները, կ'ազդէ աշակերտների կեանքի բարոյական կողմի վերայ: Անդ հակառակն նոքա աշխատում են որպէս զի երեխայոցն միջոց տան որքան կարելի է աւելի խորը կերպով հասկանալ աղօթքի էութիւնը: Աղօթքն է մտքի և սրտի վերամբարձումն դէպի Աստուած, ուստի և հարկաւոր է աղօթքի բառամտքերի ուսուցման ժամանակ գնալ այդ երեքկողման ճանապարհով: Եթէ անալիզը մտքի սլանալուն նպաստումէ, այն ժամանակ սիրտը միշտ չէ սլանում անալիզի հետեանքի պատճառով՝ նա կարիք է զգում առանձնակի միջոցների, որոնք սնունդ են տալիս զգացմանց և վեր են սլացնում նորան աղօթքի մէջ: Այդպիսի հայեցողութիւններից դուրս գալով կրօնուսոյցները նախապէս անցնում են իրաքանչիւր աղօթքի ուսուցումն պատմական, բարոյական և բնաւորութեան զրոյցով: Զրոյցի նպատակը կայանում է նորանում, որպէս զի պարզէ երեխային բոլոր այն հասկացողութիւնները, որոնց նա կարող է արտայայտել Տիրոջ առաջն իւր կեանքի թէ այս և թէ այն դէպքումն, առաւօտեան, երեկոյեան, հիւանդութեան ժամանակ և այլն: Յետոյ նախապատրաստական զրոյցը պէտքէ, որքան կարելի է, աւելի կենդանի կերպով շարժէ երեխայի զգացմունքը, այդ պատճառով կրօնուսոյցը առանձին ուշադրութեամբ ընտրում է փաստեր սրբազան և եկեղեցական պատմութիւնից, դէպքեր օրական կեանքից, որոնք յայտնի են երեխայոց և կամ՝ հնարաւոր են լինել նոցա դրութեան մէջ: Այստեղ ամենագլխաւորն այն է, որ նոցա մտքի համար հասկանալի են և խորն կերպով շարժում են նոցա զգացմունքը: Մտքի և զգացմանց տարրերի գումարից կազմում է երեխայի մէջ հոգեկան դրութիւն, որը կարելի է անուանել աղօթական, եթէ նա դարձած է դէպի Աստուածն: Կրօնուսոյցները, որոնք գնահատում են իւրեանց առարկայի մէջ զգացման կեանքը, որպէս գլխաւոր տարր բարոյական - քրիստոնէական կեանքի, կենդրոնացնում են իրանց աշխատանքի մեծ մասը երեխայոց զգացմանց և զարգացման վերայ: Եւ արդարեւ՝ կրօնուսոյցների մեծամասնութիւնը յաջողութեամբ է հասնում բաւարար տեղեկութեանց և պատասխանների, բայց շատերն են արդեօք հասնում եռանդուն բարեպաշտութեան: Ուրիշ առարկաների վերաբերմամբ կան ուսուցիչներ, որոնք իրանց առարկաները լաւ գիտեն և լաւ էլ հաղորդում են իրանց սանիկներին, բայց և հէնց այդ ուսուցիչները երեւում են արդեօք իրանց ունկնդիրների մէջ հիմնաւոր բարոյական համոզմանց որպէս զարգացողներ: Այս կողմանէ կարելի է հիմնուիլ պատմութեան և ազգային լեզուի ուսուցիչների վերայ, այդ առարկաները կրօնից յետոյ երեւում են որպէս աւելի յարմար նիւթ համոզմանց կրթութեան համար: Այսպիսի մեծ նշանակութիւն պէտքէ տրուի նախապատրաստական զրուցատրութեանց մեր ծրագիրների մէջ կրօնի վերաբերմամբ մեր

Ժողովրդական ուսումնարաններում: Աղօթքն պէտքէ կաղմուած լինի այնպիսի խնդիրներից, որոնք աւելի մերձենալի են երեխայի հասակին, և այնպիսի շնորհակալութիւններից, որոնց անկարելի է, որ նորա սիրտը չզգայ: Այդ կերպով երեխան կիմանայ աղօթք, բայց չի կարող զգալ ոչ սէր, և ոչ անկեղծ պահանջ աղօթելու. կարգալ աղօթք, դեռ ևս չի նշանակում աղօթել: Այս խօսքերն միշտ ի նկատի պէտքէ ունենայ կրօնուսույցը իրրե իւր գործունէութեան հիմք: Արդէն ժամանակ է կրօնագիտութեան դասաւանդման մէջ բարոյական ուղղութիւն զարգացնելու և զօրացնելու: Իւրաքանչիւր ուսուցչի աշխատանքը այս նպատակով ցոյց կը տայ, որ նա անկեղծօրէն և կանոնաւոր կերպով է ծառայում յօգուտ կրօնի:

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ

ՄԻԱՍՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ:

Որովհետեւ աղօթքների ուսուցման նախընթացող զրոյցների մէջ կրօնուսույցը օգուտ կը քաղէ պատմութիւններով սրբազան պատմութիւնից և նեղ պատմական հետեողականութիւնից դուրս պատմութիւններով որոնց շնորհիւ սրբազան պատմութեան եզրակացութեան այսինքն Քրիստոսի մասին պէտքէ առաջին դասերումն ասել (զոր օրինակ խաչակնքելու բացատրութեան ժամանակ), ուստի և կրօնուսուցչական գործնականութեան մէջ մշակուեցան երկու ուղղութիւն՝ միասնական և համակենդրօնական ուսուցումն կրօնագիտութեան: Դժբա կրօնագիտութեան մեթօդիկայի մէջ կաղմում են քայլ դէպի առաջ, երկու ուղղութիւնները զարգացան այն հայեացքից, որ կրօնագիտութեան բոլոր մասների մէջ պէտքէ միութիւն լինի: Դասընթացքի մէջ տուած են աղօթքների, սրբազան պատմութիւն հին և նոր կտակարանի, ուսումն աստուածապաշտութեան, հաւատոյ վարդապետութեան այսինքն հաւատոյ հանգանակը, և պատգամները: Իւրեանց ընդհանուր բովանդակութեամբ, անկասկած, կուրսի այդ մասները միանումն, բայց հետեիլ այդ միութեանն մանրամասնութեանց մէջ դեռ ևս կրօնուսույցներից ոչ դքի չի յաջողացել այնքան, որ բաւարար լինէին: Առաջին ուղղութեան էութիւնն է կրօնագիտութեան բոլոր մասների միասնական ուսուցումն: Դուրս գալով առարկայի բոլոր մասների միութեան մասին կաղմած հասկացողութիւնից՝ մի քանի կրօնուսույցներ ամբողջ կուրսի իրրե հիմք ընդունումն սրբազան պատմութիւնը, հրահանգուելով այն խորհրդածութեամբ, որ Աստուած պատմութեան մէջ բացեց իւր օրէնքը, պատմական անձինք ընդունեցին այդ օրէնքը: Պատմական փաստերին յետոյ յարմարեցնումն թէ այս և թէ միւս մասները: Օրինակի համար վերցնենք աշխարհի ստեղծագործութեան փաստը: Խօսելով նորա մասին պատմական կողմից, առանձնապէս ուշադրութիւն են դարձնում մարդու զգացմանց վերայ, թէ որքան նա կարող է զրգուել այդ պատմական անցքով: Սորա հետ միատեսակ յարմար է մատնացոյց անել առաջին մարդոց, կամ Դաւթին և ծագեցնել նոյն

խակ երկխայոց կողմից շնորհակալութեան զգացմունք և փառաբանութիւն Տիրոջ առաջն այն պատճառով, ինչ որ նա արեց բոլորի համար ընդհանրապէս և մեզ համար առանձնապէս: Աշխարհի ստեղծագործութեան փաստը աստուածապաշտութեան համար կարելի է վերցնել և Գալիթ մարգարէի սաղմոսներից « ի վերայ աշխարհագործ արարածոց » ՃԳ, Հէնց այսպիսի տեղերում կրօնուսոյցները փոքր ինչ հեռանում են միմեանցից մասնաւոր գէպքերով: Մի քանիսները միայն բաւականանում են ցոյց տալով ընդհանուր նմանութիւնը ըստ բովանդակութեան, միւսները ցանկանում են և յառաջ բերել բոլոր ծիսական գործողութիւնները, նորահետ կցելով աշխարհի ստեղծման և առաջին մարդոց կեանքի մասին ունեցած յիշողութիւնը: Քրիստոնէական վարդապետութիւնից այստեղ, այսինքն աշխարհի ստեղծման պատմութեանն բնականաբար վերաբերվում է Հրահանգի առաջին անդամը և Կրդ պատգամն:

Եւ առաջ բերած օրինակի մէջ բոլորովին բնականաբար կապվում է պատմական անցքի հետ քրիստոնէական վարդապետութիւնը և աստուածապաշտութիւնը, աղօթքը քիչ բնականութեամբ: Աւետման պատմութեան հետ շատ յարմար կերպով կապվում է և նորանով բացատրվում է Աստուածամոր աղօթքը՝ (Աստուածածին Անհարմարացեալ), Քրիստոսի կեանքի հետ ընդհանուր իւր տեսքով պատարագը ունի ամենամօտ կապ. բայց մանրամասնութեան մէջ պատահում են գծուարութիւններ: Այդպիսի գծուարութեանց պատճառաւ կայանում է նորանում, որ աստուածապաշտութիւնն զարգացած է եկեղեցական պատմութիւնից անկախ, ոչ ամեն մանրամասնութեանց մէջ սրբազան պատմութեան պլանով: Ուստի և կրօնագիտութեան ուսուցման միասնական մեթոդը ցանկացողները պէտք է միայն ընդհանուր կէտերում կապ ընդունեն, չմտնելով մեծ մանրամասնութեանց մէջ: — Կրօնագիտութեան բոլոր մասերի միասնական ուսուցման բացի վերև յիշած գծուարութիւններից այդ մեթոդի հակառակորդները մատնացոյց են անում և այն, որ առարկաների այդպիսի խառնորդութեամբ կամ բոլոր առարկաները կորցնում են իրանց անկախութիւնը, այնպէս որ յօգուտ ընդհանրութեան զոհվում է նոցանից իւրաքանչիւրի լիակատարութիւնը, կամ մէկ առարկայ անկախ է զրկում, իսկ միւսները ենթարկեալ գրութեան մէջ:

Մի քանի կրօնուսոյցների փոխանակ սրբազան պատմութեան կուրսի հիմք ընդունում են քրիստոնէական վարդապետութիւնն, և նորան յարմարեցնում են բոլոր միւս մասները: Բայց ի՞նչ են ասում կրօնագիտութեան միասնական ուսուցման պաշտպանները իրանց գործողութեան մէջ արդարանալու համար: Բացի վերև յիշած ընդհանուր խորհրդածութիւնից, թէ հարկաւոր է պրինցիպի միութիւնն, օրից բղխէր հաւատոյ ուսումն, բարոյական ուսումն և աստուածապաշտութիւնն, նոքա սրբազան պատմութեան պաշտպանները, նորա մէջ տեսնում են անբաժնի քրիստոնէական կրթութեան հիմքը: Սրբազան պատմութիւնը կենդանի օրինակների միջնորդութեամբ ծանօթացնում է մարդոց մարդկութեան մէջ աստիճանաբար պտրղուող Աստուծային յայանութեանց

Հետ, Գարդկութեան մանկական ճանաչողութեան ձեւերը ունին իրանց մէջ շատ հանրամարդկային տարր և շատ նմանում են անհատ անձանց մանկութեան երեւոյթներին, որոց կրօնագիտութեան մեջնորդութեամբ պէտք է պարզել, Գարդկութեան այդ (պատմական) հետեւողական կրթութեան մէջ թաղանթաւոր են կրօնական ճանաչողութեան և կեանքի բոլոր տարրեր, Գարդիկ գանազան կերպ են բնորոշում Աստուածային յայտնութիւնը և գործնական յայտնում են իրանց հաւատը, ինչպէս տէօրիփրական դատողութեան, յայտնում են իրանց խնդիրները Աստուծոյ առաջ նշնակէս և գովարանութեան և շնորհակալութեան զգացմունքները, ճանաչում են իրանց համար պարտաւորեցուցիչ թէ այս և թէ ուրիշ օրէնքներ, Սրբազան պատմութեան յաջողակ ուսուցմամբ այդ բոլորը երեխաների համար կենդանանում է, Նոյն մտածում են, զգում են և ձգտում են այն անձանց հասնել որոց մասին Նոյն լսում են պատմութիւն, Արօնուսոյցը թանգ է գնահատում կրօնական գրգռման այդ լաւ բոլորները և իբրեւ եւր Նոյն համար որոնում է եկեղեցական - կրօնական կեանքի եղած ձեւերի մէջ, Պորդ ներկայացնելով երեխայոց, ենթադրելով, հրէաների սովոր անապատի մէջ գրգռելով Նոյն ցաւակցութիւնը դէպի վշտակիցները սորա հետ և ծնեցնելով անպաշտպանութեան գիտակցութիւնը, Արօնուսոյցը կամ իսկոյն անցնում է մեր կեանքի երեւոյթներին, երբ մենք լինում ենք և ո՛չ պակաս անպաշտպան, կամ իւր պատմութիւնն վերջացնելուց յետոյ երբ նա կը յայտնէ մի քանիների կողմից դէպի Աստուած ունեցած ջերմ շնորհակալութեան և միւսների կողմից ապերախութեան զգացմանց նկարագրութիւնը, Հէնց այստեղ ամենայնպէս տեղի է աւանդելու կերակուր բնորոշելուց առաջ կամ յետոյ աղօթքի ուսուցումն, ճշմարիտ է, կարելի է և առանց պատմական փաստի դառնալ միւսնոյն փաստին, կամ խօսակցիլ հասարակական կեանքի երեւոյթի վերայ, որի մասին և մենք արդէն ասել ենք, բայց այդ պահանջում է ժամանակի նոր կորուստ, Արօնական ուսուցման խնդիրների բաղադրութեան և ժամանակի սղութեան պատճառով կրօնուսոյցը թանգ է գնահատում ժամանակը և օգտւում է զգացմանց շարժման բոլորէր, որպէս զի Նորանց աւելի հաստատապէս ամրացնել ուսանողների իսկ կրօնական կեանքի հօղի վերայ:

ԿՐԾՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԳԱՍԷԼԵՆԳՄԱՆ ՀԱՄԱԿԵՆԳՐՈՆԱԿԱՆ

ՍԻՍՏԵՄԱՅԻ ՄԱՍԻՆ,

Այդ անունով այնպիսի եղանակ է բնորոշուում, որով մի և նոյն պատմութիւնը երկու կամ երեք անգամ աւանդուումէ աստիճանաբար բնորոշակելով բովանդակութիւնը, Այդ եղանակը շատ առարկաների մէջ է գործածուում, Մանաւանդ քաղաքական պատմութեան վերաբերեալ շատ յաճախ գործ էր անցում և դրան էլ շատ անգամ դէպի չարն էին տանում, Զոր օրինակ առաջին աստիճանի վերայ երեխայոց աւանդումէին մարդոց, աշխարհագրական տեղերի անունները, թուականները, իսկ երկրորդ աստիճանի վերայ նկարագրումէին նոյն իսկ եղելութիւնները, որոց մէջ մասնակցումէին անունով յայտնի անձինք, Հասկանալի է որ առաջին աստիճանի վերայ երեխայք հեշտութեամբ կարող են զգուանք ստանալ դէպի պատմութիւնն այն պատճառով, որ նա արհեստական և սխալ կերպով է աւանդում, Մի և նոյն փաստը բնորոշելի է և սրբազան պատմութեան վերաբերեալ և զարմանալի էլ է, որ այդ եղանակը ծագեցնումէ շատերի կողմից ճշմարիտ և զօրեղ յանդիմանութիւն, Գործի վերայ այդպիսի միակողմանի հայեացք ունենալուց շատ հետաքրքիր առարկան—պատմութիւնն յառաջացնումէ տաղտկութիւն, Ո՛չ թէ նոյն իսկ գործի էութիւնից այլ և ճշմարիտ պրենցիպի գործադրութեան եղանակից յառաջ եկած վերեւ յիշած ծայրահեղութիւններից հետեւալու համար համակենդրօնականութիւնը պէտք է ուրիշ ձեւ բնորոշել, Այդ քի հերքել, որ սրբազան պատմութեան

ամեն փաստ հասկանալի չէ երեխաներին առաջին տարին, այն ինչ յետագայ տարիներում նա աւելի հասկանալի կը լինի: Աւագը և բնական է նիւթը բաժանել տարիների վերայ այնպէս, որ առաջին հասակի երեխայոց տրուին բովանդակութեամբ աւելի հասարակ պատմութիւններ, իսկ աւելի դժուարները ուսման յետագայ տարիների համար թողնել:

Նիւթի համակենդրոնականութեան համար այդ հիմքի հետ կայ և ուրիշ հիմք: Երեխայը շատ յաճախ նշանակեալ լիակատար կուրսը չեն վերջացնում և դուրս են գալիս ուսումնարանից, փոքր ինչ տեղեկութիւն ստանալով կուրսից, բայց հասկացողութիւն չունենալով հաւատոյ և բարոյական ուսման վերաբերեալ ամենաէական կողմի մասին: Աշաղրութեան առնելով այդ տխուր երեւոյթը ուսումնարանական կեանքի մէջ, արդարեւ յարմար է ամբողջ կուրսի նիւթը տարիներին համեմատ այնպէս բաժանել, որպէս զի իւրաքանչիւր ուսումնական տարուայ ընթացքում, երեխան ստանայ ամփոփ տեղեկութիւնների պաշար, մանաւանդ այդ անհրաժեշտ է առաջին տարում:—Բայց պատմութիւնները առաջին, երկրորդ և միւս ուսումնական տարիների համար պէտքէ բոլորովին հասկանալի լինին երեխաներին և պէտքէ պահպանեն Աստուածաշնչի բնաւորութիւնը: Սեր մէջ հրատարակուած դասագրքերը զարմանալի են իւրեանց առանձնակի հայեացքով, Աստուածաշնչի գերազանց պատմութիւններից իւրեանց կենդանութեամբ և պարզութեամբ: շինուան մի անկեանք նկարագրութիւն եղելութեանց, Երեխայոց համար Աստուածաշնչի պատմութիւնը ոչ թէ այն ժամանակն է լինում պարզ և հասկանալի, երբ նորանից հանում են մարդոց խօսակցութիւնները, շարժողութիւնները, այլ և երբ բաց են թողնում տեղագրական մանրամասնութիւնները իսկ խօսակցութեանց մէջ միայն և եթ մի քանի արտայայտումներ, որոնք անհասկանալի են երեխայոց համար մտքի կողմն կամ պլարանական ձևի պատճառով: Համակենդրոնական սխառմայի ապագայ գործադրութեան մէջ մի քանիները առաջին տարուայ անցածը բոլորովին թողնում են այնպէս, ինչպէս որ առաջ սովորեցրած էր:—Միւսները ընդհակառակը, ձգտում են ցոյց տալ նոր կէտեր, որոնք պատմութեան մէջ են գտնվում, բայց դեռ ևս չեն բացատրած: Թէ սորա և թէ միւսները ունին իրանց հիմքը այսպէս փարուելու, ուշադրութեան տակ առնելով իրանց իսկական ընդունակութիւնները և աշակերտաց մտաւոր դրութիւնը: Երեխայոց հասակին և զարգացման համաձայն դասաւորելով սրբազան պատմութեան նիւթը, կրօնուսոյցը միայն իւր գործի մէկ մասը կը կատարէ: Այն, ինչ որ արդարացի աւելումէ սրբազան պատմութեան նշանակութեան մասին, կրօնագիտութեան ամբողջ կուրսի որպէս հիմքի, աղօթքների, հաւատոյ և բարոյական ուսման (հաւատոյ հանգանակի և պատգամների) մասին, մնում է միւսները իւր բոլոր զօրութեամբ և կրօնագիտութեան դասաւանդման համակենդրոնական սխառմայի ժամանակ: Շատ կարեւոր է պահպանել այս համոզմունքը, որ նախ և առաջ պէտքէ աւանդել պատմական փաստերը, նոցա բացառութիւնը: յետոյ պէտքէ յառաջ գալ եզրակացութիւնների ձևակերպումն աղօթքների, հանգանակի կանոնների, բարոյական պատուէրների ձևով:—Բոլորովին արդարացի համարելով օգտուիլ նիւթի համակենդրոնական դասաւանդման յարմարութիւններով, մենք խորհուրդ կը տայինք կրօնուսոյցին առաջին տարուայ համար ընտրել պատմութիւնների այնպիսի քանակութիւն, որը նա կարող է չըշտապելով լատ անցանել իւր աշակերտաց հետ: Նորա կողմից արդարացի կը լինի գերազանցութիւն տալ այն պատմութիւններին, որոնք վերաբերվում են Յիսուս Քրիստոսի և Աստուածամօր զլիաւոր գործերին: յետոյ միացնել այնպիսի պատմութիւնների, որոնք նիւթ տային աղօթքները բացատրելու համար: Յայտնի բան է, առաջին տարումն պէտք է ընտրուին քիչ և ամենապարզ աղօթքներ: Արովհետեւ կրօնուսոյցի աշակերտները արդէն կրօնագիտութիւնից ունին բաւականին սկզբնական տեղեկութիւններ, այդ պատճառով նա հրաժարվում է այն խիստ հետեւողականութիւնից, որը պահանջուած էր մարդկութեան սնոյի պատրաստութեան

մէջն Փրկչին ընդունելու համար: Երեխաները, զօր օրինակ, խաչ հանելու ժամանակ մատները միացնում են, հետեապէս ծանօթ են կրօնագիտութեան դասընթացի վերջաւորութեան հետ արտաքին կողմանէ: Արօնուսդյը չի կարող բոլորովին մոռանալ իւր աշակերտների տեղեկութեանց մասին: Աւստի և անհետեղականութիւն չի լինել նորա կողմից, եթէ հէնց առաջին դասերից նա երեխաներին հասկացնէ մատներ միացնելը և խաչ հանելը, այսինքն քիչ խօսքերով կը պատմէ Աստուածային երկց անձանց մասին և Յիսուս Քրիստոսի խաչուելու և մահուան մասին: Արբաղան պատմութեան անցքերը, որոնք կարողէին իբրեւ հիւթ ծառայել վերոյ յիշած ճշմարտութիւնները պարզելու համար, ապագայումն առիթ կը տան աւելի լիակատար կերպով ուսումնասիրելու այդ ճշմարտութիւնները: Արօնուսդյին թող չբշտի մեջնեն յարձակմունքները կարծեցեալ անհետեղականութեան մասին, երբ առաջին դասերումն խօսում են կուրսի վերջին դասերումն ուսուցանելի անցքերի նշանակութեան մասին: Դորա հետ և չի հարկաւոր մոռանալ, որ բացի ուսումնարանական կրօնական ուսուցմանից կայ և կրօնական ուսուցումն քրիստոնէական ընտանիքի՝ եկեղեցու մէջ: Աւսումնարանի խնդիրն է ուշադրութիւն դարձնել ընտանիքի և եկեղեցու ազդեցութեան վերայ և աւելի լիակատար կրօնական ձև տալ դաստիարակութեանն:

Գ. ԵՐԶՆԿԵԱՆ:

ՈՍԿԵՄԱԹՐ - ՏԻՐԱՄԱԹՐ.

(Դարբնաց - Բար և Հողուց չանք)

Անձեացի Անձեացիք

Թողնում Պաղատն ու պինդ Պանգուար,

Հայր Արամազդն ու սէր-Աստղիկ,

Թողնում գալիս են Դարբնաց - Բար,

Դարբնաց - Բարին բարձր կանգուն

Պայ Անահայ ոսկի պատկեր—

Գիշեր - ցերեկ զիմաց ոսկուն

Շարժում են հոն հզօր ձեռքեր:

Շարժում են միշտ ածում կռան,

Եւ շիկաժառ երկաթ ծեծում

Ահագնագոռ սալի վրան

Եւ ծեծելիս չորս դին հեծում:

Հեծեծումէ դողում քարը,

Եւ արձագանք բերում-տանում:

Դղորդն ընկնում ողջ աշխարհը,

Եւ խուռն ամբոխ ոտքի հանում:

Եւ խուռն ամբոխ Անձեացիք

Թողնում Պաղատն ու պինդ Պանգուար,

Հայր Արամազդն ու սէր-Աստղիկ,

Թողնում գալիս են Դարբնաց - Բար:

Դարբնաց - քարին պսակ հիւսում

Մեծ բարերար Ոսկեմօրը,

Եւ նրանից կեանք են ուղում,

Աւ բողբոսում շուրջ բոլորը: